## ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Կանանց իրաւունքի ընդարձակումն Անգլիկան եկեղեցում։ Անցեալ ամառ Լօնդոնում կայացել է անգլիկան եկեղեցու երկու գլխաւոր ներկայացուցիչների ժողովը—Քէնդրբրի համաժողովի և ներկայացուցիչ եկեղեցական խորհրդի։ Այդ երկու ներկայացուցիչների ժողովում խորհրդակցութեան նիւթ է եղել կանանց իրաւունքներն ընդարձակելու խնդիրը։ Քէնդրբրի համաժողովում նախագծել են կազմակերպելու կենդրոնական միսսիոներական խորհուրդ (The Central Board of Missions), ըստ որում վերջինիս կազմի մէջ ենթադրուել է ընդունել քսան կին իրեն խորհրդի ընտրութեամբ։ Այդ որոշումը հետևանք է եղել այն պատճառաբանութեան, որ առհասարակ առաքելութեանց վերաբերեալ գործերում կանայք ցոյց են տուել մեծ հառնդ և օգտակար գործունէութիւն, այդ տեսակէտից և յարմար են գտել թոյլ տալ կանանց մասնակցութիւնը կենդրոնական միսսիոներական խորհրդում։ Նոր կանոնադրութեան համաձայն այդ խորհուրդը պէտք է կազմուի 300 անդամից, որոնց մէջ պէտք է մտնեն 40 եպիսկոպոս, 40 քահանայ, 40 աշխարհական, պալատների կողմից ընտրուած աշխարհականներ, և այլ դասակարգի ներկայացուցիչներ, հետևապէս կանայք 20 թուով փոքրամասնութիւն են կազմելու այդ ժողովում։ Երկու ժողովներում կանանց միսսիոներական խորհրդի մէջ ընդունելու որոշումն ընդհանուր հաւանութիւն է գտել։

Բ. վ. Ա.